## ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՀՈԴՎԱԾԸ

*Ճշմարտությունը մի գործընթաց է, որն իր զարգացման ընթացքում մի շարք հաջորդական աստիճաններ է անցնում, որոնցից յուրաքանչյուրի վրա հաճախակի նոր բովանդակություն է ձեռք բերում, չկորցնելով պատմականորեն ավանդական ձևը։ Այդպիսի ճշմարտություն է ազատ, անկախ և միացյալ Հայաստանի գաղափարը։*

*1919 թ. Դաշնակցություն կուսակցության կողմից պաշտոնապես որդեգրված այդ գաղափարը դարձավ կուսակցության ազգային կոնցեպցիայի առանցքը։ Սակայն գաղափարի բովանդակությունը զարգանում է ժամանակի ընթացքում՝ կախված կոնկրետ քաղաքական իրադրությունից, ինչը հաստատում է Դաշնակցություն կուսակցության ճկունությունը, դինամիկությունը և կենսունակությունը։*

*Այդ զարգացման փուլերից մեկն է ամրագրում Արտաշես Աբեղյանի հոդվածը։ Հեղինակը հնատոհմ իսկական հայ մտավորական էր, հայտնի գիտնական և Դաշնակցություն կուսակցության գաղափարախոսներից մեկը։ Հոդվածը տպագրվել է 1927 թ.՝ Դաշնակցություն կուսակցության Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» հանդեսի 10—11-րդ համարներում։*

*Կարելի է համաձայնվել հեղինակի գաղափարների հետ կամ ժխտել նրա մտքերը, փաստարկել հեղինակի դրույթներից մի մասի հնացած լինելը, որը հետևանք է 1920-ական թվականների իրողությունների։ Սակայն անաչառ ընթերցողը չի կարող չնշել քաղաքական մտքի անհերքելի խիզախությունն ու տաղանդը, ստեղծագործական, ոչ դոգմատիկ մոտեցումը, արտասովոր ողջամտությունը, նրբին ներզգացողությունն ու հոտառությունը, ապշեցնող կանխագուշակությունները, որոնք իրականանում են այսօր և, վերջապես, ամբողջական տրամաբանական ազգային կոնցեպցիայի գոյությունը, որի կարիքը մենք հիմա այնքան ունենք։*

*Գոյություն ունի մի հին կանոն, որ ամեն նորը լավ մոռացված հինն է։ Բայց որևիցե բան մոռանալու համար առաջին հերթին պետք է որևիցե բան իմանալ։ Հետևելով հանրապետության ժամանակակից խորհրդարանում Հայաստանի ապագայի մասին բանավեճերին, սկսում ես հասկանալ, թե մեղքի ինչպիսի բեռ է ծանրանում նախկին տոտալիտար կարգի վրա, որը հատուկ գրապահոցներում կողպեքի տակ էր պահում հայ հասարակական-քաղաքական մտքի ժառանգությունը։*

*Այսօր հայրենական հասարակական-քաղաքական մտքի տարրական չիմացությունը լուրջ խոչընդոտ է ազգային կոնցեպցիա մշակելու գործում։ Միայն հայ հասարակական-քաղաքական մտքի հարուստ ժառանգությունն օգտագործելով կարելի է այդ ձեռնարկում հասնել հաջողության։ Անկեղծ հույս ունեմ, որ այս հոդվածի հրապարակումը կօգնի գնահատելու և ընդունելու տվյալ փաստը։*

*Եզրափակելով ավելացնեմ, որ հոդվածը հրապարակելիս ամսագրի խմբագրության համաձայնությամբ ես վճռականապես հրաժարվեցի «գիտական պահակախմբից»՝ «ուղղող» և «հարդարող» ծանոթագրումներից։ Հայ մտավորական Արտաշես Աբեղյանի մտքերը, ինչպես ցանկացած այլ հեղինակի մտքերը, որոնք արտահայտում են կառուցիկ և ամբողջական մտայնություն, դրա կարիքը չեն զգում։*

Ռ. Լ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

## *ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ ԵՎ ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ*

*(ազգային քաղաքականության խնդիրներ)*

**Արտաշէս Աբեղեան**

I

*Յուրաքանչյուր մի ազգ, որ ձեռք է բերել որոշ հասունություն և ձգտում է քաղաքական ուրույն կյանքը սեփական Հայրենիքում, պարտավոր է հրա-*

տակորեն ձևակերպել իր ազգային իդեալը, ինչպես նաև՝ մշակել նրան հետապնդելու բոլոր հնարավոր և նպատակահարմար միջոցները։ Ուրիշ խոսքով՝ ինքնուրույն կյանքով ապրել ուզող ամեն մի ժողովուրդ պետք է ունենա իր ազգային քաղաքականությունը։

Անհրաժեշտ է պարզել ուրեմն այն հիմնական խնդիրը, թե՝ ո՞րն է մեր ազգային քաղաքականության առարկան (object) և որը՝ նրա ենթական (subject)։ Այսինքն՝ ինչն է կազմում մեր ազգային-քաղաքական ձգտումների կետ-նպատակը, այն, որ հանուր է ազգի ամբողջությանը, ո՞րն է մեր գոյության խարիսխը, այն նյութական պատվանդանը, որի վրա պիտի կառուցվի ու բարգավաճի նա։ Եվ հետո, ո՞րն է այն ուժը, նյութական և բարոյական կարողության ամբողջությունը, որ ի վիճակի է առհասարակ հետապնդելու և ի վերջո նաև իրագործելու առաջադրված նպատակը։ Որո՞նք են, միևնույն ժամանակ, այն օժանդակ ազդակները, որ ի սպաս դրվել կարող են ազգային քաղաքականության պատվանդանի կառուցման և ամրացման գործին։

Հարկավ, այս խնդրի պատասխանը չէ կարող լինել մեկ և միատեսակ, այլ կախումն ունի նրան քննության առարկա դարձնող անհատի և խմբակցության քաղաքական ու ընկերային դավանանքից, նրա որդեգրած ազգային իդեալից և վերջինիս ի սպաս դրվող գործերու կերպից։ Եվ որչափ քիչ են մի ազգի զանազան հատվածների ու խմբակցությունների մեջ եղած տարբերությունները գեթ ազգային իդեալի շուրջը, որչափ հավաք և համախումբ նրա նյութական ու բարոյական կարողությունները, այնչափ էլ ավելի դյուրին՝ դեպի այդ իդեալը տանող ճամփան։ Պայմանով սակայն, որ առաջադրվող իդեալը առհասարակ բարձր չլինի ազգի բովանդակ ուժերի հասողությունից և տարողությունից։

Որչափ և ըստ երևույթին պարզ է առաջադրված խնդիրը, այնուամենայնիվ, նա այսօր էլ շարունակում է հայ իրականության համար մնալ հիմնական։ Եվ հասկանալի է՝ ինչու։ Մոռնալու չէ, որ հազիվ 35—40 տարի է անցել այն օրից, երբ հայ ժողովրդի առջև ձևակերպված դրվեց նրա քաղաքական վերածնության մեծագույն խնդիրը, նրա ազգային իդեալը։ Թեև ոգորումներով ու փորձերով բավականաչափ հարուստ, բայց տակավին մեկ սերունդ է ապրել ու պայքարել այդ իդեալի համար։ Իսկ ինչ է այդ ժամանակամիջոցը՝ առաջադրված մեծ նպատակի ճամփուն վրա։ Շատ կարճ տեվողություն։

Մոռնալու չէ, որ հայությունը—թեև քաղաքական ու մշակութային անցյալով հարուստ—ընդամենը մեկ դար առաջ ավելի ինչ չէր, քան եկեղեցական մի համայնք, այն ևս՝ բաժան-բաժան, ցիրուցան։ Մեր սերունդը երբ երեխա էր, «Հայաստան», «ազգասեր» բառերը սակավաթիվ ընտրյալների բերնում միայն հնչում էին որպես սրբազան պատգամներ, այլապես նրանք համանիշ էին քաղաքական բանդագուշանքի, վերջինիս ետևից վազող երազատեսների։

Ավելին դեռ, Հայաստանով հետաքրքրվողներից, «ազգասեր»ների խմբակներից՝ որպես վտանգավոր տարրերից՝ փարսախներով հեռու էին փախչում անգամ շատ շատերը նրանցից, որոնք այսօր իրենց մենաշնորհն են համարում խոսիլ ազգի և հայրենիքի անունից։ Տեսեք, ուրեմն որչափ գերմարդկային ուժեր են սպառվել ազգային իդեալը ժողովրդականացնելու համար, և թե որչափ կենսունակ է այն, իդեալը ինքը, որ բաղդատաբար կարճ միջոցում սկզբունքային վճռական հաղթանակ է տարել անթիվ և բազմապիսի հակառակորդների վրա։

Եվ եթե քննելու ենք մեր ազգային իդեալի ապրած տագնապները, նրա տարած հաղթանակների քով վերհիշենք նաև կրած պարտություններ, վերջիններիս հիմնական պատճառը պիտի գտնենք, արտաքին ազդակներին կից և նրանց համազոր, մեր ներքին ճակատի պնսահման թուլությունը։

Հայ ազգային իդեալի առաջամարտիկները ստիպված են եղել անսպառ եռանդ թափել որչափ արտաքին թշնամիներին, այնչափ և ներքին հակառակորդներին հաղթահարելու համար, պայքարելով միաժամանակ երկու հզոր ճակատների վրա, այն ևս նորակազմ ու տակավին թույլ ուժերով։ Դրա համար է, որ այսօր էլ տեսականորեն բնավ անտեղի չէ այն հարցը թե՝ Հայ Դատի գործոն առաջադրությունը կամ Հայ Հեղափոխությունը ժամանակից վա՞ղ ծագեցավ, թե՞ ուշ։

Տեսականորեն դատելով՝ հարկավ վաղ, հայության տակավին անպատրաստ վիճակում։ Երևակայեցեք, եթե այն անսպառ եռանդը, այն անհաշիվ նյութական ու բարոյական կարողությունները, որ ծախվեցան մեր ներքին ճակատը հարգարելու համար, հայի քաղաքական գիտակցությունը բարձրացնելու նպատակով, ի սպաս դրված լինեին արտաքին ճակատի վրա։ Որչափ տարբեր պիտի լիներ արդյունքը։

## II

Առաջադրած հարցին՝ ո՞րն է մեր ազգային քաղաքականության առարկան, անմիջապես տանք պատասխան։

Դա մեկ է, եղակի, և նրա անունն է՝ Հայաստան։

Թերևս այսօր դա համարվի ոմանց կողմից այնչափ պարզ, այնչափ հասկանալի, որ անգամ ավելորդ սեսրվի նրա առաջադրությունը։ Եվ սակայն, թողնելով իսկ մեկ կողմը ավելի հեռուն, հիշենք վերջին տարիների անցյալը։ Արդյո՞ք հայության հավաքականության, նրա բոլոր տարրերի ու խմբակցությունների համար անխտիր ու հավասար չափով վճռվա՞ծ խնդիր էր. թե այո՛, Հայաստանն է մեր ազգային քաղաքականության միակ առարկան, մեր ձգտումների կետ-նպատակը, որից դուրս չկա և ոչինչ, որ ընդունելի լիներ մեզ համար. միակ անփոխարինելի անոթը հայ ազգային իդեալի։

Իհարկե կար։ Եվ դեռ չգիտեմ, թե ներկայիս արդյոք որոշ շրջանակներ, վերջնապես հրաժարվելու են քաղաքական այն հեռանկարից, համաձայն որի Հայաստանին կից և կամ նրանից դուրս Կիլիկիայում կամ այլուր որոնելու և տեղավորելու է այդ անոթը։ Ավելին դեռ։

Ես չեմ համոզված, թե անգամ Հ. Հ. Դաշնակցության շարքերում կատարելապես արմատախիլ եղած է նման մի մտայնություն, լինի նա տեղավորված թեկուզ բացառիկ անհատների ուղեղում։ Երբ ուրեմն դեռ երեկ էր, որ շատեր Կիլիկիան կամ Կիլիկիան ևս համարում էին հայ պետականության կորիզ, երբ երեկ էր, որ այժմյան Հայաստանից դուրս և նրանից բաժան «Հայկական օջախ» էին որոնում մարդիկ—այսօր վերջակե՞տ է դրված նման պատրանքների—ապա ուրեմն որչափ հաճախ կրկնվի այն քաղաքական ճշմարտությունը, թե Հայաստանից դուրս չկա մեզ համար ո՛չ փրկություն, ոչ էլ մի հատիկ կորիզ, այնչափ լավ մեր քաղաքական դաստիարակության համար։

Եթե այս այսպես է, եթե այսօր մեզնում գոյություն չունի և ոչ մի խմբակցություն, որ հրապարակավ տարբեր տեսակետ պաշտպանի, ապա ուրեմն ազգային գերագույն շահերի տեսակետից համապատասխան ձևով էլ պիտի որակվի ամեն մի փորձ հակառակ կամ տարբեր ուղղությամբ, ամեն մի քայլ, որ Հայաստանից դուրս հայության համար հայրենիք կորոնի։

Խոսքը հարկավ մեր ժողովրդի ցրիվ հատվածների ժամանակավոր հարկադրյալ բնակավայրերի ու բույների մասին չէ, որոնք պարզ օթևանների հանգամանք միայն ունենալ կարող են։ Թող այս վերջինները լինին թեկուզ շատ նպաստավոր պայմաններում դրված։ Դրանք երբեք և ոչնչով չեն կարող հայրենիքը փոխարինել՝ իրենց վրա հաստատված մեր բազմությունների համար։ Ավելի շատ՝ դրանք մեր աչքում մեր սեփական հայրենազրկության, մեր քաղաքական դժբախտության մի-մի խորհրդանիշներն են, մի-մի աղաղակող վկաներ՝ մեր ազգային օրգանիզմի ջլատման փաստի։

Կարճ՝ հայ ազգային քաղաքականության առարկայի շուրջը այսօր ստեղծված է մեզանում, ավելի կամ պակաս ուժեղ, մեկ ճակատ։ Թանկ, շատ սուզի է նստել մեր ժողովրդին հասարակական մտքի այդ զարգացումը, բայց վերջապես նա փաստ է այսօր, թեև տակավին տկար փաստ։

Այս իմաստով էլ պիտի մոտենալ Միացյալ Հայաստանի գաղափարին։

Սերունդների նախապատրաստած և 1919 թ. մայիս 28-ին հանդիսավորապես հռչակված «Միացյալ Հայաստան» գաղափարի մեծ խորհուրդն էլ այն է, որ միանգամ ընդմիշտ վերանում է հայ ազգային իդեալի երկճյուղ, անգամ եռաճյուղ և բազմաճյուղ պատկերացումը, և նա փոխարինվում է միանգամ ընդմիշտ, միասնական, համազգային իդեալով—Միացյալ Հայաստանով։ Երկու և ավելի ճակատների փոխարեն այսպիսով ստեղծում է մեկ ճակատ, այդ փաստով իսկ վերջինս դառնում է ավելի կայուն ու զորավոր։

Եվ սակայն, երբ մենք ասում ենք Միացյալ Հայաստան, երբ մենք այդ դարձնում ենք մեր ազգային քաղաքականության գերագույն առարկան, այդ չէ նշանակում տակավին, թե մենք նրա իրականացումն էլ համարում ենք օրվան, ընթացիկ քաղաքականության խնդիր։ Այսպես դատել նշանակում է հաշվի չառնել ժամանակի և տարածության ազդակները, որոնց ճշգրիտ ըմբռնողությունը հիմն է ամեն մի իրապաշտ քաղաքականության։

Մոռանալու չէ երբեք, որ երբ 1919-ին հրապարակ հանվեց Միացյալ Հայաստանի պահանջը, մենք առարկայորեն գտնվում էինք մեր այդ իդեալի իրականացման նախօրեին։ Ազգային և միջազգային բոլոր աղդակները այն ժամանակ վճռապես խոսում էին նրա օգտին։

Այնուհետև փոխվեցան նույն այդ աղդակները։ Բնականաբար պիտի փոխվեին և փոխվեցան էլ մեր ըմբռնողությունը Միացյալ Հայաստանի սահմանների, ինչպես նաև նրա իրականացումը հետապնդող միջոցների և տեվողության մասին։

Միացյալ Հայաստան գաղափարի էությունը դրանով չվերացավ հարկավ, ոչ էլ աղճատվեց, այլ հարմարվեց փոխված պայմաններին, որոնք մեր կամքից դուրս են, որոնց, սակայն, հաշվի առնել չէ կարող նույն այդ կամքը։ Միացյալ Հայաստանի ամբողջացման գաղափարը վաղը կարող է գոհանալ Կովկասյան Հայաստանի հափշտակված գավառների վերստացումով, նա կարող է հետագային հետապնդել Արևմտյան Հայաստանի թեկուզ մեկ-երկու գավառի ազատագրումը և դարձյալ գոհանալ ու ամբողջացված սեպվիլ, բոլոր պարագաներում այդ ամենը տեղի ունենալ կարող է արդի Հայաստանի ընդարձակումով։

Ուրիշ խոսքով՝ Միացյալ Հայաստանի գաղափարը միայն և միայն ժամանակակից Հայաստանի սահմանների ընդարձակման խնդիր է—այն ուղղությամբ և այն չափով, որ օգտաշահ է և անհրաժեշտ, հայության ցրիվ խոշոր հատվածները համախմբելու հայրենի հողերի վրա։

Ահա նաև այդ տեսակետից Միացյալ Հայաստանի գաղափարը հակադրվում է քաղաքական այն ըմբռնողության, լինի նա համայնավարների, թե այլոց կողմից պաշտպանված, համաձայն որի՝ միակ պատրանք է Միացյալ Հայաստանը ինքնին, թե՝ Հայկական հարցը լուծված է արմատից և առհավետ, և թե միանգամ ընդմիշտ գծված են Հայաստանի սահմանները, նրանցից դուրս ավելի կամ ուրիշ պահանջ չունի հայ ժողովուրդը։

## III

Ինքնին առանձին հարց է, իհարկե, թե Միացյալ Հայաստանի—ավելի լայն կամ անձուկ սահմաններով—իրականացումը կարճ թե երկար տևողության խնդիր է, ապրո՞ղ թե ապագա սերունդներին է վերապահված նա։

Այդ հարցի այս կամ այն պատասխանը կախում ունի միջազգային ուժերի դասավորումներից, բայց որ գլխավորն է՝ մեր սեփական ուժերի հավաքումից և զորացումից։

Վերջին 10—12 տարիների ընթացքում մենք այնքան թուլացանք ֆիզիկապես, այնչափ նոսրացավ մեր համրանքը, այն աստիճան սեղմվեցավ ազգագրական Հայաստանը—իսկ դրանք են ամեն մի ազգային քաղաքականության առաջ մղիչ գերազանց ազդակները—որ անկարող ենք հաշվի չառնել այդ ամենը և ըստ այնմ էլ չափել ու ձևել մեր քաղաքական վարքագիծը՝ առաջիկա ժամանակաշրջանի համար։

Իրականության առջև աչք չգոցելը, որչափ և դառն լինի նա, քաղաքական գործիչի և կազմակերպության է՞ն առաջին պարտականությունն է։ Իսկ այդ իրականությունը ասում է, առանց հուսաբեկ ու թևաթափ անելու մեզ, թե հայ ազգի մեծագույն դահիճները ըստ էության անսխալ էին գծել իրենց նշանակետը՝ հայ ժողովուրդի մի հատվածի անջատումով նրա Դատի իրականացումն էլ երկարաձգել հիսուն տարով։ Երկարաձգել, բայց ոչ թաղել, որ վեր է մեր ցեղի բոլոր դահիճների համար իսկ՝ միասին առած։

Շարունակենք։ Այսպիսով՝ Միացյալ Հայաստանի ելակետը Անդրկովկասում որոնելու է։ Ներկա Հայաստանից թեև դուրս, բայց նրան անմիջապես կից գտնվող և ազգագրորեն ու աշխարհագրա-տնտեսորեն—ուստի և իրականորեն—ոչ նվազ հայկական բռնագրաված շրջանների վերստին կցումը մեր երկրին՝ դիտելու է որպես առաջին ճանգրվանը Միացյալ Հայաստանի աստիճանական իրականացման։ Ապա թե կարող է հետևել քեմալական Տաճկաստանի կողմից գրավված անդրկովկասյան գավառների, իսկ վերջին միայն Արևմտյան Հայաստանի այս կամ այն—երկու պայմաններում էլ հայաթափուր—երկրամասի կցումը։

Կրկնում ենք։ Երբ առաջադրվում է քաղաքական այս ծրագիրը, այդ դեռ չէ նշանակում, թե նրա իրագործումը համարվում է կարճ ժամանակվա խնդիր։ Բնավ երբեք։ Մենք չէ, որ այսչափ փորձերից և փորձառությունները հետո իսկ, մեր ոտքի տակից պիտի սահեցնենք իրական հողը ու ցնորքների ստվերից վազենք։

Ավելին. այս չէ նշանակում, թե անգամ եթե վաղը փոխվի քաղաքական դրությունը մեր հայրենիքում և Հ. Հ. Դաշնակցությունը նորեն իշխանության գլուխ անցնի, նա բոլոր պայմաններում պիտի հետապնդի անհապաղ կամ շուտափույթ իրականացումը Միացյալ Հայաստանի։

Այսպես դատել, կը նշանակե հրաժարիլ, մի կողմից, քաղաքական շիտակ ուղեգծից և ամբոխավարությունը շփոթել քաղաքականության հետ, մյուս կողմից էլ՝ չունենալ սեփական ուժերի գիտակցությունը։

Եվ, եթե մենք քննադատում ենք հայ բոլշևիկների և նրանց կուրորեն հետևող հայ քաղքենի տարրերի քաղաքականությունը՝ այդ անում ենք ոչ թե նրա համար, որ նրանք այսօր, տվյալ պայմաններում գոհացում չեն տալիս և կամ չեն կարողանում գոհացում տալ հայ ժողովրդի հողային արդար պահանջներին, այլ նրա համար, որ նրանք առհասարակ ուրանում են նման պահանջի գոյությունն անգամ, ժխտում են Հայաստանի սահմանների ընդարձակման անհրաժեշտությունը, բուռն պայքար են մղում Միացյալ Հայաստանի գաղափարի դեմ իսկ, հռչակելով այն որպես աշխարհակալական և արկածախնդրական։

Ուրիշ խոսքով՝ մեր և մեր հակառակորդների էական տարբերությունը սկզբունքային է, մեր ներհակությունը հետապնդած իդեալի և իդեալների շուրջն է։ Մեր և, —որ նույնն է—սեփական հայրենիքի ամբողջացումը իրեն իդեալ գծած հայ ժողովուրդի—իդեալն է, որ ուրացվում է և արհամարհվում։ Եվ քանի կա, շարունակվում է այս մտայնության մեջ գոյություն ունեցող վիհը, անկարելի է նաև՝ կամրջել նրանց։

## IV

Ցնո՞րք է, պատրա՞նք է ամբողջական Հայաստանի գաղափարը։

Մենք ոչինչ՝ չունինք բոլոր նրանց դեմ, որոնք և անկեղծորեն և սեփական դատողությամբ հասած են նման եզրակացության։ Բայց այդպիսիներից

պահանջելու իրավունքը ունինք մենք, որ նրանք չուրանան այն փաստը, թե այդ գաղափարը խորապես յուրացրել է հայ ժողովուրդը և համառորեն հետապնդում է նրա իրականացումը։

Եվ ո՞վ է, ո՞ր ազգն է, որ այսօր չէ ձգտում իր հատվածների և իր հողերի հավաքման ու ամբողջացման։ Եվ մի՞թե քիչ են նրանք, որ արդեն իսկ իրականացրել են այդ իդեալը։

Շատ չէ, ընդամենը 10—15 տարի առաջ բուրժուական աշխարհակալություն, արկածախնդրություն, հետամնացություն և ազգայնականություն էր որակվում Եվրոպայի շատ ընկերավարականների—էլ չեմ ասում ավելի արմատական տարրերի—կողմից ազգահավաքման ամեն մի ծրագիր։ Եվ նրանց հետևելով էլ՝ մեր տնարույս մարքսիստները—բոլշևիկ թե մենշևիկ, միևնույն է, բայց նաև՝ ոչ մարքսիստ էսէրներ և ուրիշներ դեռ քսան տարի առաջ «պանարմենիզմ» որակելով խարանում էին հայության և հայ հայրենիքի հավաքման ու ամբողջացման բոլոր փորձերը, որ այն ժամանակ Հ. Հ. Դաշնակցության ղեկավարության տակ իրենց գրեթե սկզբնավորության մեջ էին գտնվում։ Նրանք հետադեմ, բուրժուական, աշխարհակալական էին անվանում մեր ժողովրդական խավերի ազգային ամենաառողջ ձգտումը՝ հավաքվելու և ամփոփվելու սեփական հարկի տակ, միացյալ ուժերով նվիրվելու հայրենիքի զարգացման մեծ գործին։

Դեռ այսօր էլ պատկերը հիմնովին չէ փոխվել, թեև, այնուամենայնիվ, ազգային առողջ մտքի ազդեցությունը ակներև է անգամ բոլոր նրանց վրա, որ դեռ երեկ ժխտում էին այն՝ իր հիմքում իսկ։ Անգամ նրանց քաղաքական և ընկերային բառարանի մի շարք արտահայտություններ փոխ առնված են երեկի և այսօրվան հակառակորդներից, թեև ինքնաբուխ, հարազատ չեն և այդ իսկ պատճառով նրանց բերնում հնչում են որպես մուրացածո։

Իսկ այսո՞ր։ Հետևեցեք Եվրոպայի մարքսիստների ազգային քաղաքականության, այսինքն՝ բոլոր նրանց, որոնք երեկ ի լուր աշխարհի մեկ բերան գոռում էին—«պրոլետարը հայրենիք չունի»։

Թողնենք մյուսներին մի կողմը, առնենք մարքսիզմի դասական հայրենիքը՝ Գերմանիան։

Առանց չափազանցության կարելի է պնդել, թե սարեր ու ձորեր են առաջացել այս երկրի սոցիալ-դեմոկրատիայի և նրա ղեկավարների մտայնության մեջ՝ ինչպես մի շարք ուրիշ, նույնպես նաև ազգային քաղաքականության խնդրում։ Նրանք այսօր ոչ միայն հնացած են համարում և միանգամայն ժխտելի՝ «պրոլետարը հայրենիք չունի» նշանախոսքը, այլ հայրենիքը և ազգային բարիքները համարում են նախ և առաջ նրա, պրոլետարիատի, և առհասարակ աշխատավոր զանգվածների սեփականություն։

Ավելին դեռ։ Այսօր Գերմանիայում և գերման Ավստրիայում գոյություն չունի և ոչ մի ուրիշ կուսակցություն, որ այնպես մեծ թափով ու հետևողականությամբ հետապնդելիս լինի գերման հողերի և հատվածների ամբողջացումը, ինչպես այս երկրի սոցիալ-դեմոկրատիան։ Ոչ պակաս չափով նաև ավստրիական քույր կուսակցությունը։ Ես չեմ մոռացել այդ ուղղությամբ արտասանված այն խորը հայրենասիրական ճառերը, որ տարիներ առաջ ընտրական մի պայքարի միջոցին լսեցի այստեղ, Բեռլինում, Ավստրիո սոցիալ-դեմոկրատիայի անվանի պարագլուխ Օտտո Բաուերի և «Ֆորվերտս»-ի խմբագիր Ֆրիդրիխ Շտամֆերի բերնից։

Մի ուրիշ օրինակ։ Երկու-երեք տարի առաջ հիմնված գերման-ավստրիական ժողովրդային միության մասնակի նպատակն է՝ հետապնդել այդ երկու գերման երկրների միացումը, ավելի շուտ՝ Ավստրիո կցումը Գերմանիային։ Իսկ այս միության հիմնադիր-ղեկավարների առաջին շարքերում է գտնվում ոչ այլ ոք, քան ռայխստագի նախագահ և գերման սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխ Պաուլ Լեոբեն։ Նրա գործակիցներն էլ մի խոշոր չափով ընկերվարականներ են։ Եվ նրանք բոլորը ամեն պատեհ առիթով բա-

նավոր ու գրավոր պրոպագանդ են մղում այդ գաղափարի շուրջը։ Եվ այս՝ պատված Գերմանիայում և Ավստրիայում, Վերսալի դաշնագրից հետո։

Կարճ, «Միացյալ Գերմանիայի» դրոշակակիրները այսօր գերազանցորեն մարքսիստներ և ընկերվարականներ են։ Նրանք հարկադրված են հաճախ մինչև իսկ պայքար մղել, այդ գաղափարի համար, ընդդեմ քաղքենի տարրերի։ Ուրիշ խոսքով, ինչ որ ըստ էության տարիներ առաջ հետապնդում էին հա-մագերմանականները, այսօր յուրացրել են ընկերվարականները, միայն թե «համագերմանականություն» նշանախոսքը փոխարինել են «Մեծ Գերմանիա» (Crossdeutsch land) ավելի առողջ և իրական նշանախոսքով։

Մեծ կամ Միացյալ Գերմանիան է, որ ըստ գերման ընկերվարականների, իր մեջ պիտի առնի ոչ միայն Ավստրիան, այլև Գերմանիայից զատված մի քանի ուրիշ գավառներ ևս, հատկապես արևելյան սահմանների վրա։

Դավաճանել են գերման և ավստրիական ընկերվարականները, որդեգրելով ազգային նոր, առողջ քաղաքականություն, թե՞ այժմ են կեցել ուղիղ ճամփու վրա, հարմարվելով իրականության, ինչպես և գաղափարների աշխարհում կատարվող հզոր բնաշրջման (էվոլյուցիա) օրենքին։ Իհարկե, վերջինս է ճշմարիտը։ Եվ այսպես վարվելով, նրանք ոտք են դրել իրապաշտ քաղաքականության գետնի վրա։

Ի՞նչ խոսք, նրանք չեն պնդում, թե վաղը կամ մյուս օրը իրականանա պիտի Միացյալ Գերմանիան։ Ոչ էլ դրա համար սուսեր են ճոճում օդի մեջ, ռազմի ծրագիրներ որոճում։ Բնավ։ Ո՞ր կուսակցությունն է ավելի հաշտարար ու խաղաղասեր, քան ընկերվարականները ընդհանրապես և գերմանականը՝ մասնավորապես։

Բայց չէ՞ որ իրապաշտ քաղաքականությունը սուր ու սուսերից դուրս և հաճախ նրանից է՛լ ավելի հատու ուրիշ զենքեր ունի իր ձեռքին։ Միայն թե ազգային քաղաքականության իդեալն է, ազգի և հայրենիքի ամբողջացումը, որ չէ ուրացվում և լքվում, այլ կարող ձեռքերի մեջ առնվում ու պաշտպանվում։

Ուրիշ բան չէ հետապնդում նաև Հ. Հ. Դաշնակցության որդեգրած ազգ. քաղաքականության «Միացյալ Հայաստանի» գաղափարը։

## V

Սեփական հայրենիքի ամբողջացումը, պատմականորեն անջատ ցեղային հատվածների համախմբումը և միացումը—դա մեր օրերի կարգախոսն է գիտակցության եկած բոլոր ազգությունների, մեծ թե փոքր։ Ազգային լինելով մեկտեղ, նա գերազանցորեն աշխատավորական է և համամարդկային։ Եվ ոչ միայն Գերմանիայում, այլև եվրոպական բոլոր երկրներում պարզորոշ նկատելի է այդ հակումը։ Նրանց օրինակին են հետևում այսօր ասիական ժողովուրդները, հաճախ նրանցից իսկ փոխ առած զենքերով պայքարելով իրենց դեմ։

Մեկ կամ երկու սերունդի գործ չէ, հարկավ, հայրենիքի և ազգության կատարյալ ամբողջացումը։ Վերջինս դժվարանում է մանավանդ այն ազգությունների համար, որոնք նոսր են համրանքով, թուլ՝ ներքին կազմակերպությամբ, տկար՝ քաղաքական վերածնության պահանջով, որպես հետևանք դարավոր ստրկական կյանքի։ Վերջինների շարքին ենք պատկանում նաև մենք՝ հայերս։ Դրանից է նաև ահռելիությունը մեր քաղաքական երկունքի։

Եվ սակայն ազգային վերածնունդի ճամփան վարդերով ծածկված չէ եղել շատ ավելի նպաստավոր պայմաններում ապրած ժողովուրդների համար ևս։ Մի ամբողջ դար տևեց, մինչև որ իրականացավ, օրինակի համար, Բալկանյան ժողովուրդներից ոմանց հողային և ցեղային ամբողջացումը։ Մի հարյուրամյակ պետք եղավ, մինչև որ գլուխ եկան «Միացյալ Ռումանիան», «Միացյալ Սերբիան»։ «Միացյալ Հունաստանը» կես ճամփու վրա մնաց, «Միացյալ Բուլգարիան» իր հույսերի իրականացման նախօրեին փետրա-

թափ եղավ։ Եվ սակայն այդ ասել չէ, թե դրանք հուսաբեկվեցան, լքեցին իրենց ազգային իդեալը։ Բնավ։

Նայեցեք բալկանյան պետությունների պատմական աշխարհագրության քարտեզին։ Ավելի հին շրջանները թողեք մի կողմը, վերցրեք վերջին 15—20 տարիները, ի միտ առեք բալկանյան պատերազմներից ասդին կատարված քաղաքական փոփոխությունները։

Փոքրիկ Սերբիան, կտրված ծովերից և աշխարհից, 15—20 տարի սրանից առաջ ուներ ընդամենը 48 հազար քառ. կմ տարածություն և 2 1/2 միլիոն բնակիչ։ Ասել է՝ Սերբիան, դրեթե մեկ դար անկախ գոյություն ունենալով հանդերձ, իր հայրենի հողերի և իր հարազատ ժողովրդի ոչ ավելի քան 1/5 էր պարփակում իր սահմանների մեջ։ Տարածությամբ էլ նա հազիվ 1 1/2 անգամ, իսկ բնակիչների թվով 2 1/2—3 անգամ ավելի մեծ էր, քան այսօրվան Հայաստանը։ Իսկ ներկայիս Հարավ-Սլավիան, որ է «Միացյալ Սերբիան», ունի 220 հազար քառ. կմ տարածություն և 13 միլիոն բնակիչ։ Ասել է՝ և բնակչությամբ, և տարածությամբ նա 5 անգամ ավելի մեծ է, քան նախապատերազմյան Սերբիան։

Վերցնենք ուրիշ օրինակ—Ռումանիան։ Բալկանյան պատերազմներից առաջ նա ուներ 131,000 քառ. կմ տարածություն և 6 1/2 միլիոն բնակիչ։ Իսկ «Միացյալ Ռումանիան» այսօր կրկնապատիկ մեծ է ու բազմամարդ, ունի 260 հազար քառ. կմ տարածություն և 13—15 միլիոն բնակիչ։

Հունաստանը բալկանյան պատերազմներից առաջ ուներ 64 հազար քառ. կմ. տարածություն և ընդամենը 2 1/2 միլ. բնակիչ, իսկ այսօր, անգամ իր մեծ հուսախաբություններից հետո, բնակիչների թվով ավելի քան կրկնապատկվել, տարածությամբ էլ զգալիորեն մեծացել է։

Եվ այսպես մի շարք ուրիշ պետություններ ևս։

Հիշե՞լ, որ պատմական նպաստավոր դեպքերի հետևանքով քաղաքական անկախ գոյություն ստացած մերձբալթյան երկրներից մեկ-երկուսը ևս տարածությամբ ու բնակիչների թվով շատ հեռու չեն այսօրվան Հայաստանի համեմատությունից։

Ալբանիան մեկ— և մյուս կողմից (30 հզ. քառ. կմ և 900 հազար բնակիչ) հար և նման է մեր երկրին։ Նման՝ նաև այն տեսակետից, որ նրա հողերի և ցեղակիցների կեսն ևս այսօր իրենից դուրս են, կցված դրացի պետություններին։

Ինչպես միացյալ Ալբանիան, այնպես նաև միացյալ Բուլղարիան և Հունաստանը տակավին սպասում են իրենց ապագային։

Հիշե՞լ նաև այն, թե մի շարք պետություններ իրենց քաղաքական ինքնուրույնության արշալույսին բնակիչների թվով, տարածությամբ և ուրիշ պարագաներով շատ և ավելի երշանիկ են եղել, ոչ էլ գուցե պակաս անգամներ հուսախաբություններ կրել քան մենք։

Ի՞նչ պիտի ասվեր այժմ, եթե 20—30 տարի առաջ հույներ, ռումաններ և սերբեր գտնված և «աշխարհակալություն», «արկածախնդրություն» որակած լինեին բոլոր այն հայրենասերների ձգտումները, որոնք ժամանակին առաջադրել և հետապնդել են այսօր արդեն իսկ իրականություն դարձած միացումը և ամբողջացումը սեփական երկրների։

Ըստ էության տարբեր չէ նաև մեր քաղաքական ուղեդիծը, որ ձգտում է դեպի Միացյալ Հայաստան։ Ծանր է, հարկավ, անբաղդատելիորեն ծանր՝ մեր իրականությունը հանդեպ ուրիշների, օրինակ, բալկանյան ազգերի։ Եվ սակայն ազգային իդեալի էությունը և նրա արդարացիությունը բնավ չէ փոխվում դրանով։ Խոսք կարող է լինել ուրեմն միայն առաջադրված նպատակին հասնելու միջոցների մասին։ Երբ ուրեմն մի անգամ ընդունենք քաղաքական այդ ճշմարտությունը, թե Հայաստանն է, և ոչ մի այլ երկրամաս, մեր ազգային (միշտ էլ՝ պետական իմաստով հասկացված) քաղաքականության առարկան, երբ մեզ հետ միասին ուրիշ հոսանքներ ևս ընդունեն, թե Միացյալ Հայաստանի մեջ միայն կարող է ամբողջացած սեպվիլ դա, այն

ժամանակ էլ կարող ենք լրջորեն վիճել այն մասին թե ինչպես, ի՞նչ միջոցներով և եղանակով հետապնդելու է նրա իրականացումը։

Ամենից առաջ և կարևորագույնը ուրեմն գաղափարի հաղթանակի ապահովումն է, հուսով և հավատով նրան կառչելու անհրաժեշտությունը։ Եվ թվում է, թե հայ քաղաքական մտքի ժամանակավոր տեղատվությունից հետո կարծեք թե սկսում է, այս մարդի մեջ ևս, մակընթացության շրջան։ Միացյալ Հայաստանի գաղափարը, որ գերազանցորեն համազգային նշանախոսք է, ըստ երևույթին, տակավ դիրքեր գրավել է սկսել, Հ. Հ. Դաշնակցությունից դուրս, ուրիշ խմբակցությունների շարքերում ևս։

Դժվարը առաջին քայլն առնելն է, հաջորդը ինքնիրեն կը հետևի։

Ավելին դեռ։ Մենք տածում ենք այն հավատը, թե վաղ կամ ուշ Միացյալ Հայաստանի գաղափարը յուրացնեն պիտի անգամ բանիմաց հայ բոլշևիկները։ Ոչինչ, թե նրանք այսօր փարսախներով հեռու են փախչում դրանից։ Չէ՞ որ 15—20 տարի առաջ նրանք ոչ պակաս մոլեգնոտությամբ վանում էին իրենցից «ազգ», «հայրենիք», «անկախություն», «ֆեդերացիա» և նման նշանախոսքեր ևս, իսկ այսօր հոլովում են ամեն առթիվ։ Ոչինչ, եթե այդ գաղափարները խաթարված, աղճատված են բոլշևիկյան բառարանում։

Բայց չէ՞ որ ժամանակը ամենակարող է և ընդունակ՝ սրբագրություններ մտցնելու անգամ բոլշևիկյան խոսքերի և գործերի մեջ։

## VI

Եվ սակայն, բավական չէ ասել, թե մեր ազգային քաղաքականության առարկան է Հայաստանը՝ ամբողջացած ու միացած ձևով։

Մեր խոսքը ազգագրական Հայաստանի, հայ հայրենիքի սեփական զավակներով բնակեցնելու ծրագրի շուրջը չէ միայն։ Հարկավ, դա հիմն է առհասարակ ամեն մի ազգային քաղաքականության, նրա այբուբենը, բայց ոչ ամեն ինչ։

Ինչպես որ այբուբենը սորված մանուկը չէ կարող գոհանալ իր այբբենարանով, նա հասունանալով՝ ընթերցանության գրքերի պահանջն ևս կը զգա, նույնը նաև՝ գիտակցության հասած ժողովուրդը։

Ուրիշ խոսքով՝ ազգագրական Հայաստանի գաղափարը պետական Հայաստանի գաղափարով լրացնելու և բովանդակալից դարձնելու անհրաժեշտությունն է առաջ գալիս։

Իսկ որպեսզի մի ազգ պետական դառնա, կարևոր է, որ նա ամենից առաջ լինի ազատ և անկախ։

Անազատ և հպատակ ազգերը չեն կարող երազել սեփական պետականության մասին։ Որպեսզի Հայաստանը—միացյալ թե ոչ —լինի պետական ինքնուրույն միավոր, դառնա մեր ազգային քաղաքականության առանցքը, պիտի հոգանք նաև, որ նա լինի ազատ և անկախ։ Ազատ և անկախ հայրենիքը միայն իր հերթին ընդունակ և ի վիճակի լինել կարող է՝ իրականացնելու հողային և ցեղային ամբողջացումը։

Առաջին հանգրվանը, որին պիտի ձգտի ուրեմն Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան հետապնդող ազգային քաղաքականությունը, դա մեր հայրենիքի ազատագրումն է, հայ ժողովրդի՝ ազատորեն ապրելու իրավունքը սեփական երկրի մեջ։ Քանի դեռ չկա այդ ազատությունը, հայրենիքը չէ կարող լինել ո՛չ անկախ, ոչ էլ միացած։

Ինքնախաբեությամբ չզբաղվինք, ոչ էլ մեզ հաճելին ու ցանկալին շփոթենք իրականության հետ։ Խորհրդային Միության մեջ մտնող երկիրները և ժողովուրդները, դրանց թվում ուրեմն նաև հայն ու Հայաստանը, ապրում են մոտավորապես այնչափ ազատ կամ անազատ պայմաններում, որչափ ցարական կառավարության օրով։ Քաղաքական և քաղաքացիական ազատության մասին խոսելը հեգնանք իսկ է մի վարչակարգի համար, որ պաշտոնապես յուրացրել և սրբագործել է դիկտատուրայի ռեժիմը։

Չվիճենք այն մասին, թե արդյո՞ք և իսկապես դիկտատուրա՞ է գոյություն ունեցող ռեժիմը, թե՞ պատմության մեջ սովորական մի սակավապետություն։ Ընդունինք անգամ, թե Ռուսաստանի արդի ռեժիմը իսկապես ոչ դիկտատուրա է և ոչ սակավապետություն։ Ընդունինք մինչև իսկ անկարելին; թե՝ դա ոչ թե համայնավար կուսակցության դիկտատուրան է, այլ պրոլետարիատի դիկտատուրա, ինչ որ շարունակ կրկնում են բոլշևիկները։

Անգամ այս դեպքում, նշանակում է, քաղաքական իշխանությունը գտնվում է ողջ ազգաբնակության մի չնչին տոկոսը կազմող խավի ձեռքում, քանի որ պրոլետարիատը, մանավանդ ճարտարարվեստային պրոլետարիատը, գյուղացիության և մյուս խավերի հանդեպ աննշան փոքրամասնություն է ներկայացնում Ռուսաստանում։

Համեմատությունը ավելի ևս ակնբախ է Հայաստանի վերաբերմամբ, որ գրեթե բացառապես գյուղացիական երկիր է, և ուր բանվորության ամբողջական թիվը մի երկու տասնյակ հազարից չէ անցնում։

Որչափ և բոլշևիկները պնդելու լինին, թե պրոլետարիատը խորհրդային կարգերում «դաշնակցել» է գյուղացիության հետ, փաստը մնում է իր ուժի մեջ անգամ համայնավարների համար։ Այն, որ գյուղացիությունը խորհրդ. կարգերում երկրորդարժեք «դաշնակից» է, որ լավագույն պարագային, հինգ գյուղացու «ընտրական» քվեն հազիվ հավասարում է մեկ բանվորի քվեին։

Մնում է փաստ նաև այն, որ խորհրդ. Միության բնակչության հոծ մեծամասնությունը ընդհանրապես և Հայաստանինը մասնավորապես—գյուղացիությունը—անազատ է ոչ միայն քաղաքականապես, այլև տնտեսապես։ Որ այսօրվան խորհրդ. տնտեսության ողջ ծանրությունը գյուղացիության ուսին է բարձված, չէ վերցնում փոքրիկ կասկած անգամ։ Հայաստանի պայմաններում դրությունը ավելի ևս վատթար է։

Եվ դեռ մենք վերցրինք իդեալական վիճակը, տեսականապես հնարավորը։ Իրականությունը, ինչ խոսք, ավելի մռայլ է։ Այսօրվան Ռուսաստանը տիպիկ սակավապետություն (օլիգարխիա) է, ինչ որ անվիճելիորեն փաստված է նաև Կարլ Կաուցկիի և մի շարք ուրիշ հեղինակավոր դեմքերի կողմից։ Այդ սակավապետությունը, լավագույն պարագային, հենվում է հազիվ 7—800 հազարի հասնող համայնավար կուսակցականների վրա։

Ուրիշ խոսքով, եթե ցարական ռեժիմը հենվում էր մի քանի հարյուր հազար տոհմային ազնվականների վրա, խորհրդայինն էլ հենվում է գրեթե նույնչափ թիվ կազմող արտոնյալ մի նոր դասակարգի, համայնավար կուսակցության վրա։ Փոխվել են անունները, մնացել՝ էությունը։ Իսկ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ դիկտատուրա, բռնապետություն, ինչպես կուզե թող անվանվի նա, ինչ անունով կուզե թող գործածվի։

Եթե այդ այդպես է, եթե մի ժողովրդի ճնշող մեծամասնությունը ապրում է չնչին փոքրամասնության բռնության տակ և կարող է ոչ ազատորեն խոսել, ոչ էլ կազմակերպվել ու քաղաքական-տնտեսական գործունեություն ծավալել, ապա ուրեմն նրա՝ այդ ժողովրդի կատարյալ իրավունքն է՝ բոլոր հնարավոր միջոցներով թոթափել իրենց բռնության լուծը և տիրանալ իր մարդկային և ազգային ազատություններին։

Ուրիշ խոսքով, ինքնափոխության իրավունքը բռնապետական կարգերում ապրող ամեն մի ժողովրդի անկապտելի իրավունքն է։ Մի վարչակարգ, որ ընդունակ չէ և ոչ էլ պատրաստակամ՝ բնաշրջվելու և ճանաչելու ժողովրդի հոծ մեծամասնության ազատ ապրելու իրավունքը, վաղ թե ուշ պիտի տապալվի նույն այդ ժողովրդի միահամուռ գրոհի առջև։

Ուրիշ վախճան չպիտի ունենա հարկավ նաև բոլշևիկյան ռեժիմը, եթե նա, ինչ որ շատ անհավանական է, ներքուստ չբարեշրջվի։ Ենթադրել, թե դիկտատուրայի ռեժիմը հավերժանա պիտի Ռուսաստանում, թե ռուս ժողովուրդը, որչափ և իներտ լինի նա այսօր, վաղ թե ուշ չպիտի թոթափի իրենից բոլշևիկյան լուծը, ավելի քան միամտություն է։ Խոսք կարող է լինել միայն

ժամանակի և պայմանների մասին։ Որ ազատությունը վերջի ի վերջո այնուամենայնիվ ձեռք պիտի բերվի այս կամ այն ճանապարհով, կասկածից դուրս է։ Հայաստանը և հայ ժողովուրդն էլ, որոնք ապրում են քաղաքական նույնպիսի պայմաններում, ինչ որ ռուս մեծ ժողովուրդը և առհասարակ Խորհրդ. Միության բոլոր ժողովուրդները, բնականաբար պիտի քայլի նույն այդ ուղին, վերստին ստանալու համար իր ազատությունը։

(Շարունակելի)